ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՈՎ ԷՋՄԻԱԾՆԻ ԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՊԱՏՎԻՐԱԿ Պ-Ր. Պ. ԹՈՓԱՔՊԱՇՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐԱԾ ԻՐ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պուլկարահայության անունով Էջմիածնի ժողովին մասնակցող փլովդիվաբնակ պր. Պ. Թոփաքպաշյան հետևյալ հայտարարությունները ըրած է մեր խմբագրին։

«Հայաստանի մեջ մեր սպասածեն շատ ավելի արտագին ընդունելություն գտանք։ Մեզ ընդունեցին եղբայրական ողջագուրումներով։ Մեր այցելությունը տնեցավ նաև այն օգուտը, որ փարատեց դաղութահայերու մասին Հայաստանի մեջ գոյացած այն կարծիքը, թե ան ուծացած է հայրենիքեն։

Բախտ ունեցա այցելելու Երեվանի համալսարանը, որ իր զանազան ճյուղերով պատիվ կբերի Հայ ժողովրդին։ Ներկա գտնվեցա թատերական ներկայացումի։ Մեր թատրոնը իր շենքով և գեղարվեստով բարձր է և հիանալի։

Այցելեցի «Արարատ» գինիի և կոնյակի գործարանը։ Տեսա Քանաքեռի ջրաէլեկտրակայանը, որուն համար ծախք եղած է 125 միլիոն ռուպլի։ Հոյակապ և արդիական ձեռնարկ մը, որ լույս և էներգիա կհայթայթե երկրին։ Թեև արձակուրդի շրջանին մեջ, սակայն առիթը ունեցանք տեսնելու Երևանի նախնական և միջնակարգ վարժարաններեն երկուքը։ Առողջապահական շենքեր, մանկավարժական ամեն պայմաններ լրացնող դպրոցներ են։ Հսկա և հանրօգուտ հաստատություն մըն է նաև «Մարի Նուպար» ակնաբուժարանը։ Այցելեցի Օշական, Աշտարակ, Ոսկեվազ, Նոր-Արաբկիր գյուղերը։ Անոնց փողոցներն ալ ասֆալթե են և կոլխոզները լավ կազմակերպված։ Ամեն գյուղ ունի իր ընթերցարանը, դպրոցը և մշակութային հաստատությունները։ Հիվանդանոցներ, մանկամատուներ և հանչային հաստատություններ կծառայեն ժողովուրդի բարօրության։ Ժողովուրդը առույգ, կայտառ և գոհ է իր վիճակեն։ «Մարի Նուպար» ակնաբուժարանի մեջ տեսանք զինվորական մը և կին մը, որոնց աչքերը բոլորովին դարմանված են կուրութենե։ Բաղդ ունեցանք տեսակցություն ունենալու ժողովրդական կոմիսարներու հետ, որոնք պատասխանեցին պատվիրակներու բոլոր հարցումներուն։ Հայաստանի վարիչները ներգաղթի հարցն ալ կը քննեն արտացավությամբ և պետական մարդու վայելչությամբ։ Հայաստանի բոլոր պետական, գիտական և մշակութային գործիչները լուրջ զարգացած և համակրելի անձնավորություններ են։ Ինչ որ ուրիշ ազգեր չեն կրցած ընել հարյուր տարվա մեջ, Հայաստանի ժողովուրդը ըրած է 25 տարվան մեջ։

(«Երևան» հուլիս 25, թիվ 67).

ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐՈՒ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Էջմիածնի Եկեղեցական ժողովին մեջ պուլկարահայությունը ներկայացնող պատգամավորները հետևյալ հայտարարությունները ըրին մեր խմբագրին։ Առաջնորդ Տ. Գրիգոր եպիսկոպոսը հայտարարեց.—

«Ճամբորդությունը անցավ շատ հաճելի և հանգիստ, Սոֆիա—Մոսկվա, Պաքու Թիֆլիս, Երեվան գծով։ Ամեն կողմ արտազեղ ընդունելություն պետական ներկայացուցիչներե, որոնցմե դիմավորվեցավ պատգամավորությունը, կայարաններու մեջ և առաջնորդվեցավ ամենաշքեղ հյուրանոցներ, հետաքրքրվելով մեր ճամբորդության մասին։

Սովետական իշխանությունները բոլոր պատգամավորներու հանդեպ վերաբերվեցան մեծ հարգանքով ու անմոռանալի հոգածությամբ։ Հոգևոր պաշտամունքների խորհուրդի նախագահություն կազմված է ժողովրդական կոմիսարներու խորհուրդին կից թե Մոսկվա և թե Երևան, որոնք իրենց հարգելի նախագահներով և պաշտոնյաներով ամեն տեղ շփման մեջ գտնվեցան պատգամավորներուն հետ, շռայլելով ամեն դյուրություն, որուն նմանին չենք